ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Բ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

Միքայել Մուրադյան
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԵՐՍԵՍ V ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ XIX Դ. ՌՈՒՍԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գաղափարախոսների, հասարակական-քաղաքական մտքի հանրահայտ ներկայացուցիչների, աշխարհիկ և հոգևոր նշանավոր գործիչների փայլուն ու անմար համաստեղության մեջ առանձնանում է Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես V Շահազիզյան Աշտարակեցին՝ XIX դ. առաջին կեսի ամենակարկառուն, բացառիկ և եզակի պատմական անհատը, որն իր անձնական օրինակով մի ձեռքում բարձր պահելով Սուրբ Խաչը, իսկ մյուսում՝ ազգափրկիչ, դարերի ընթացքում ժողովրդի ինքնությունը երաշխավորող Թուր Կեծակին, վեհափառ հովվապետի իրավունքով և իսկական հայրենասերին հատուկ կրքոտությամբ ու ջերմությամբ կոչ էր անում Արարատյան երկրի իր հայրենակիցներին հայկազյան անկոտրում ոգով պայքարել և թոթափել օտարի տիրապետությունը, ուրախացնել ալեհեր Մասսին, մեկ անգամ ևս արյամբ պարարտացնել հայոց հողը, ապա ապրել ազատ ու անկախ: Ներսես Աշտարակեցին հետևողականորեն շարունակելով և խորացնելով իր մեծ նախորդների՝ Իսրայել Օրու, Մինաս վարդապետ Տիգրանյանցի, Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի, Լազարյանների՝ Ռուսաստանի հետ սերտ ռազմաքաղաքական դաշինք կնքելու և համագործակցելու, նրա անմիջական աջակցությամբ ու հովանու ներքո պետականությունը վերականգնելու վերաբերյալ քաղաքական ժառանգությունը և կտակը, մասամբ և յուրովի իրականացրեց այդ ծրագրերը, քանզի ռուսաց կայսրությանը Արևելյան Վրաստանի միացումից հետո խոսք չէր կարող լինել Ռուսաստանի ներքո հայկական պետականության վերականգնման մասին: Թեև դա լուրջ նահանջ էր, այդուհանդերձ պատմական Հայաստանի մի փոքրիկ և գողտրիկ Արարատյան երկիրը՝ Սուրբ Էջմիածնով, ազատվեց օտարի տիրապետությունից և ընդգրկվեց հյուսիսային քրիստոնյա կայսրության կազմի մեջ, որը միանշանակ առաջադիմական նշանակություն ունեցող իրադարձություն էր ողջ հայության քաղաքական կյանքում,

ինչպես պատմական կոնկրետ իրադրության մեջ, այնպես էլ հատկապես ազգային դարավոր ակնկալիքների իրագործման հեռանկարների տեսանկյունից: Ներսես Աշտարակեցու, նրա նախորդների և հետնորդների դեպի Ռուսաստանն ունեցած քաղաքական անհողդողդ ու հիմնարար կողմնորոշումը լիովին արդարացվեց պատմության անաչառ թեմիսի առջև, քանզի պատմաքաղաքական հեռավոր համայնապատկերից դիտարկելով Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման նշանակությունը՝ աներկբա է դառնում, որ միացումից շուրջ 90 տարի անց վերականգնված հայոց պետականության արմատները պետք է փնտրել Թուրքմենչայի հաղթական հաշտության պայմանագրում: Հետևաբար, ակնհայտ է Ներսես Աշտարակեցու քաղաքական հարուստ ժառանգության համակողմանի յուրացման և պահպանման հրատապությունը և արդիականությունը՝ ազգային ակնկալիքների, հայ ժողովրդին դարերի ընթացքում բռնությամբ պարտադրված անօրինությունները վերացնելու, պատմական արդարությունը վերականգնելու տեսանկյունից, որը սկսվեց Արցախի ազատագրման հաղթարշավից և իրականություն դարձավ պետականության առկայության պայմաններում:

Ներսես Աշտարակեցու՝ իսկական հասարակական-քաղաքական գործչին հատուկ շրջահայեցությունը և լայնախոհությունը, պատմաքաղաքական գործընթացները կոնկրետ համայնապատկերում իրատեսորեն գնահատելու մեծագույն կարողությունը, համոզված ռուսամետությունը, որ տվյալ պահի համար ավելին էր, քան ջերմ հայրենասիրությունը, և անվերապահ նվիրվածությունը հայտնի էին ազգին: Նա ղեկավարվում էր ոչ թե պարզունակ, ոչինչ չտվող, անօգուտ զգացմունքներով, կորցրած անուրջներով, այլ ցուցաբերում էր խիստ անհրաժեշտ սթափ մոտեցում, որ այլընտրանք չունեցող միակ ճիշտ քաղաքական ուղի էր՝ օտարի տիրապետությունը թոթափելու համար: Այդ ուղին արդեն տեսել, համոզվել ու գնահատել էին նրա ժամանակակիցները և զինակիցները, ինչպես հայ, այնպես էլ ռուս հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ներկայացուցիչները, բոլոր նրանք, ովքեր բախտ էին ունեցել գեթ մեկ անգամ հանդիպել, շփվել, լսել ու զրուցել իր գիտակից կյանքը ազգի բարօրությանը նվիրած հայոց հովվապետի հետ: Բավականին արժեքավոր, հավաստի, անաչառ են ռազմական պատմաբան Վասիլի Պոտտոյի, ռուս-պարսկական պատերազմի ամենաարյունահեղ ու անհավասար Օշականի ճակատամարտի հերոս գեներալ Աֆանասի Կրասովսկու, Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար ու կառավարչապետ գեներալ Ալեքսեյ Երմոլովի, անգամ նրան փոխարինած գեներալ Իվան Պասկևիչի, որի հարաբերությունները Ներսես Աշտարակեցու հետ, մեղմ ասած, բարդ էին, ոչ բարեկամական, թերևս թշնամական, ռուս պատմաբաններ, հրապարակախոսներ, գրողներ Սերգեյ Գլինկայի, Ստեփան Նովոսելովի, Անդրեյ Մուրավյովի, Կովկասյան կորպուսի հրամանատարությանը կից դիվանագիտական հանձնարարականներ կատարած, «Խելքից պատուհաս» դասական ստեղծագործության հեղինակ Ալեքսանդր Գրիբոյեդովի, դեկաբրիստական շարժման ակտիվ մասնակիցներ Եվդոկիմ Լաչինովի, Իվան Պուշչինի, ռուսաց պատմագրության դպրոցն անցած հայ հայտնի պատմաբան Կարապետ Եզյանի (Էզովի), Ալեքսանդր Երիցյանի, ապա նաև Մ. Ալավերդյանցի, օտար հեղինակներից և հասարակական գործիչներից պրուսացի բարոն Ավգուստ ֆոն Հաքստհաուզենի գնահատականները, որոնք այսօր էլ ունեն ճանաչողական, գիտաքաղաքական, գործնական-կիրառական նշանակություն հայ-ռուսական մերօրյա միջպետական հարաբերությունների տեսանկյունից:

Առանձնապես կարևորվում է ռուսաց կայսր՝ փայլուն ռազմական ինժեներ Նիկոլայ Առաջինի գնահատականը և հատուկ ուշադրությունը Ներսես Աշտարակեցու նկատմամբ Պետերբուրգում վերջինիս գտնվելու ժամանակ: Ռուսական կայսրությանը մատուցած լուրջ ծառայության համար Ներսես Աշտարակեցին արժանացավ ամենաբարձր պարգևների՝ կառավարական շքանշանների, որ, ինչպես սպասվում էր, գրավեց ռուսաց հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ուշադրությունը, գտնվեց տարբեր ուղղություններին պատկանող պարբերականների հետաքրքրության շրջանակներում, որոնք բնականաբար, անհրաժեշտ համարեցին ոչ միայն տպագրել կայսերական հույժ կարևոր հրամանագրերը, այլև այդ առնչությամբ կատարել սեփական ուշագրավ մեկնաբանություններ: Հատկանշական է, որ Ներսես Աշտարակեցու հայրենանվեր, լայնածավալ գործունեությունը համընկավ ռուսաց չորս կայսրերի թագավորության տարիների հետ: Այն սկսվեց Պավել Առաջինի օրոք և ավարտվեց միայն կյանքից հեռանալուց հետո, երբ նոր էր գահ բարձրացել Ալեքսանդր Երկրորդ Ազատարարը: Հատկանշական է, որ Ներսես Աշտարակեցին արդեն կաթողիկոս ընտրվելուց հետո մայր աթոռ էջմիածնում 1850 թ. մեծագույն հանդիսավորությամբ ու հայոց եկեղեցուն հատուկ և բնորոշ ծիսակատարությամբ ընդունեց ապագա կայսր-ազատարարին՝ թագաժառանգ Ալեքսանդր Նիկոլաևիչին: Թագաժառանգը էջմիածին ժամանեց Ալեքսանդրապոլից հոկտեմբերի 6-ին, ընդունեց կաթողիկոսի օրհնությունը, ծանոթացավ հոգևոր հայրերի հետ, էջմիածնի հինավուրց վանքի պատմությանը և հարուստ մատենագրությանը: Ճաշի ժամանակ կաթողիկոսը առողջություն և երկարակեցություն մաղթեց ռուսաց կայսր Նիկոլայ Պավլովիչին, իսկ թագաժառանգը իր հոր՝ թագավորի անունից շնորհակալություն հայտնեց կաթողիկոսին և հոգևոր հայրերին իրենց ջանադիր ծառայության համար:

Ներսես Աշտարակեցու ամենաբեղմնավոր գործունեությունը համընկավ Ալեքսանդր Առաջինի և նրա եղբայր Նիկոլայ Առաջինի թագա-

վորության տարիներին: Եվ օրինաչափ է, որ հենց Ալեքսանդրի և Նիկոլայի օրոք Ներսես Աշտարակեցին պարգևատրվեց կայսերական բարձր շքանշաններով: Ստեփան Նովոսելովը իր «Ներսես V Գերագույն հայրապետ և Ամենայն Հայոց կաթողիկոս» խորագիրը կրող գրքում նշում էր, որ հայոց հովվապետը երկարատև ջանադիր աշխատանքի համար ի բարօրություն սեփական ժողովրդի և ի շահ Ռուսաստանի արժանացավ կայսր Ալեքսանդրի ողորմածությանը և բարեհաճությանը ու 1819 թ. հունիսի 15-ի կայսերական գերագույն հրովարտակով պարգևատրվեց Սուրբ Աննայի Առաջին աստիճանի շքանշանով: Ներսես Աշտարակեցուն առաջինը ջերմորեն շնորհավորեց Կովկասի կառավարչապետ, նրա լավ բարեկամ գեներալ Երմոլովը[1]: Առանձնապես կարևորվում է Նիկոլայ Առաջինի 1827 թ. փետրվարի 2-ի թվագրությամբ յուրատեսակ ուղերձը այն ժամանակ դեռևս Վրաստանի հայության թեմի արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցուն, որտեղ գոհունակությամբ նշվում է նրա ռուսամետ քաղաքական դիրքորոշումը[2]: Իսկապես, Ներսես Աշտարակեցին արդեն հսկայական ջանքեր էր գործադրում հայկական կամավորական զինված ջոկատներ ստեղծելու, որոնք մասնակցելու էին ռուսաց բանակի հետ Երևանի բերդի ազատագրմանը: «Ներսեսը,- գրում է Ալավերդյանցը Պասկևիչին նվիրված գրքույկում,- ձգտում էր, որպեսզի հայերը նույնպես դիմեն զենքի և նիզակով ու սրով դառնան ռուսների սխրակիցները... Կառավարությունը... մեծ գոհունակությամբ ընդունեց Ներսեսի՝ հայկական աշխարհազոր կազմելու մասին առաջարկը և ցույց տվեց ամեն տեսակի աջակցություն»: Ֆելդմարշալ Դիբիչը, հաշվի առնելով Ներսես Աշտարակեցու գործունեությունը, կայսրին ուղղված իր զեկուցագրում արքեպիսկոպոսին ներկայացրեց որպես ռուսաց բանակին անմնացորդ նվիրված անձնավորություն, որին պետք է ըստ արժանվույն գնահատել: Աշտարակեցու մտահղացումն իրագործելու նպատակով 1827 թ. օգոստոսի 29-ին «Ռուսկի ինվալիդ իլի վոյեննիե վեդոմոստի» թերթը հրապարակեց Վրաստանում ռուսաց զորքերի հրամանատար, Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինի «Կոչ հայերին» խորագրով դիմումը, որով հորդորում էր նրանց կամավոր անդամագրվել հայկական ջոկատին: Հատկանշական է, որ Ներսես Աշտարակեցին անձամբ անցկացրեց հայկական գնդի զորատեսը, որի քաջ մարտիկները Մասիսի ալեհերությունը հիշեցնող արքեպիսկոպոսի ողջույնին պատասխանեցին բարձր, խանդավառ հայ-ռուսական զինակցությունը մարմնավորող «կեցցե»-ներով և «ուռա»-ներով: Նիկոլայ Առաջինը, նկատի ունենալով արքեպիսկոպոսի ռուսամետ ռազմաքաղաքական ջերմեռանդ գործունեությունը, 1828 թ. հունվարի 25-ի հատուկ ռեսկրիպտով (շնորհագրով), նրան պարգևատրեց Սուրբ Ալեքսանդր Նևսկու շքանշանով, որի մասին դրվատանքով են գրում Սերգեյ Գլինկան և Ստեփան Նովոսելովը[1]: Իսկ 1843 թ. օգոստոսի 10-ին արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցուն Ամենայն Հայոց կաթողիկոս հաստատելուց հետո նորին գերազանցություն ռուսաց կայսրը 1848 թ. մայիսի 12-ին թվով 135-րդ հայոց կաթողիկոսին բարեհաճորեն շնորհեց հերթական բարձր պարգևը, այս անգամ սուրբ Վլադիմիրի առաջին աստիճանի շքանշանը[2]:

Ռուսաց հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը Ներսես Աշտարակեցու գործունեությանը անդրադարձել է նաև Օշականի հերոսական ու հաղթական ճակատամարտի կապակցությամբ, որի շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանքն ըստ էության մնաց կանգուն ու չնվաճվեց Աբբաս Միրզայի կողմից: Ներսես Աշտարակեցուն մեծ դժվարությամբ հաջողվեց տեղեկացնել գեներալ Կրասովսկուն Էջմիածնի համար ստեղծված ծանր ու վտանգավոր դրության մասին: Սակայն վախեցնել Ներսես Աշտարակեցուն այդքան էլ դյուրին չէր, ուստի միանգամայն օրինաչափ էր նրա հստակ ու համարձակ պատասխանը Աբբաս Միրզային. «Վանքը ուժեղ է Աստծո պաշտպանությամբ, եթե կարող ես, վերցրու»[3]:

Ռուս հայտնի պատմաբան, հրապարակախոս, գրականագետ, «Ռուսկի վեստնիկ» ամսագրի խմբագիր Սերգեյ Գլինկան գրում է, որ երբ Աբբաս Միրզան վանքը շրջապատելուց հետո ռուս զինվորականներին առաջարկեց հանձնվել, նրանք պատասխանեցին շատ կտրուկ, սպարտացիներին հիշեցնող ոճով. «Չենք հանձնվի: Փառամոլը (Աբբաս Միրզան-Մ. Մ.) դիմեց այլ զենքի՝ գայթակղության, խոստանալով ոսկի ու ճոխ նվերներ: Նրան պատասխանեցին. «Ռուսներն իրենց չեն վաճառում»[4], իսկ Էջմիածնի պարետ Լինդենֆելդենն ասաց. «Եթե վանքը հարկավոր է պարսիկներին, ապա թող նրանք այնտեղ մտնեն զենքը ձեռքներին»[5]: Գեներալ Կրասովսկին իր «Օրագրում» նշում է, որ Էջմիածնի ծանր դրության մասին իրեն տեղեկացրեց Ներսես Աշտարակեցու ազգական Պետրոս Մարգարովը (Մարգարյանը): «Շատերը փորձեցին նրան հետ պահել այդ վտանգավոր քայլից, բայց նա մնաց

---

[1] Տե՛ս С. Новоселов Нерсес V Верховный патриарх и католикос всех армян. Санктпетербург; 1858, с. 5.

[2] Նույն տեղում, էջ 6:

[1] Տե՛ս С. Новоселов Нерсес V Верховный патриарх и католикос всех армян. Санктпетербург; 1858, с. 9:

[2] Նույն տեղում, էջ 33:

[3] М. Алавердянц, Граф Иван Федорович Паскевич-Эриванский и его деятельность на Кавказе в очерках армянского историка, СПб, 1912, с.14.

[4] С. Н. Глинка, Описание переселения армян адербиджанских в пределы России, М., 1831, с. 25.

[5] "Утверждение русского владычества на Кавказе", Тифлис, 1906, ч.. I, с. 227-228.

անկոտրում: Մեկ ժամ հապաղումը,- ասում էր գեներալը,- անուղղելի կդարձնի դեպքերի ամբողջ ընթացքը: Վանքը վտանգի մեջ է, պետք է գնալ»[1]:

Գեներալ Կրասովսկին, անշուշտ, ընդհանուր առմամբ քաջատեղյակ էր հայ ժողովրդի պատմությանը և հնագույն մշակույթին, որի մասին վկայում է 1828 թ. Ապրիլի 9-ին Կիևի միտրոպոլիտ Եվգենիին հասցեագրած նամակը: Գիտենալով, որ միտրոպոլիտը հետաքրքրություն էր ցուցաբերում հնագույն պատմության և մշակույթի նկատմամբ, Կրասովսկին որոշ տեղեկություններ է հաղորդում հայկական վանքերի մասին, մատնանշում դրանց բարձրարժեք ճարտարապետությունը՝ առանձնացնելով, իհարկե, էջմիածնի վանքը, հիմնադրումը կապում հայոց արքա Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի հետ: «Վանքի հնությունը հարգանք է ներշնչում, իսկ կառուցման հրաշալի եղանակը զմայլեցնում է հայացքները»[2]: «Այնտեղ,-գրում է նա,-ապրում են կաթողիկոսները՝ հայոց եկեղեցու առաջնորդները»[3]: Հետևապես գեներալ Կրասովսկին իր փոքրիկ ջոկատով նետվելով անհավասար մարտի, գիտակցում էր էջմիածնի վանքը անսասան պահելու քաղաքական նշանակությունը, քաջատեղյակ էր, թե ինչպիսին է հայ ժողովրդի վերաբերմունքը հինավուրց ու գողտրիկ վանքի նկատմամբ:

1827 թ. օգոստոսի 17-ին էջմիածնի վանքի համար տեղի ունեցած Օշարակի փրկարար ճակատամարտի վախճանը հաղթական էր և հոգնած, հյուծված, բայց հաղթանակած ռուս զինվորները... մտան էջմիածին: «Վերջապես էջմիածնի հնագույն հայկական վանքը... իր բոլոր գեղեցիկ շրջակայքով, ինչպես ափի մեջ բացվեց մեր առջև և, օ~, երջանկություն, նրա ամբողջ լայնատարած հովտում չկար և ոչ մի պարսկական սարբազ»[4]: Ըստ այս ամսագրի Ներսես Աշտարակեցին օժտված էր բարձր արժանիքներով և շատ էր հարգված հայերի կողմից իր հայրենանվեր գործունեության համար: Թեև ամսագրում տպագրված հոդվածն անստորագիր է, բայց ստույգ է հեղինակի ազգանունը. Դա Օշականի ճակատամարտի մասնակից, Կրասովսկու բարեկամ, դեկաբրիստական շարժման աչքի ընկնող գործիչ Լաչինովն է, որը գիտակցում էր հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման կարևորությունը և Ռուսաստանի Արևելյան Հայաստանի միացման ողջ առաջադիմական նշանակությունը: «Աշտարակը արքեպիսկոպոս Ներսեսի հայրենիքն է և դրանով պետք է հպարտանա: Այս պատկառելի հոգևոր հայրն իր

[1] Նույն տեղում էջ 278:

[2] "Кавказский сборник" Тифлис 1901, т. XXII "Дневник генерала Красовского 1826-1828 гг." с. 64.

[3] Նույն տեղում, էջ 64:

[4] "Московский телеграф", 1828 г., 21 N 9-12, с. 38.

հայրենակիցների համար... այնքան է հոգացել, այնքան շատ բան է արել, որ նրա անունը, անկասկած, պատկանում է պատմությանը»: «Ներսեսի հոր վերջին ցանկությունն է եղել, որ որդին իր գերեզմանին չգա այնքան ժամանակ, մինչև չիրագործվեն հայերի կաթոգին սպասելիքները, և չվերածնվի մահմեդականների կողմից ճնշված քրիստոնյա սուրբ հավատը: Արքեպիսկոպոսի ցանկությունն էր հոր շիրիմին խոնարհվելու գալ ռուս զորապետի (Կրասովսկու-Մ.Մ.) հետ, այդ ցանկությունը,- նշում է այդ սրտառուչ տեսարանի ականատես հոդվածագիրը,- իրականացվեց: Գյուղից (Աշտարակից-Մ.Մ.) կես վերստի վրա էր գտնվում Շահազիզյան-Կամսարական ընտանիքի տոհմական գերեզմանատունը, հոգևոր հայրն այստեղ բերեց ռուս գեներալին և արցունքներն աչքերին ծնկի իջնելով հոր գերեզմանին, ջերմորեն աղոթեց ամենատեսին»[1]: Ներսես Աշտարակեցին քաջ գիտակցելով, որ Օշականի հաղթական ճակատամարտը զգալիորեն մեծացրեց հայ ժողովրդի համակրանքն ու վստահությունը ռուս զինվորի նկատմամբ, մատնանշում էր. «Մեր մի բուռ եղբայրները (ռուս զինվորները-Մ.Մ.) ճեղքեցին անցան մոլեգնած թշնամիների երեսուն հազարանոց բանակի միջով: Նրանք վաստակեցին անմահ փառք, իսկ գեներալ Կրասովսկու անունը հավերժ անմոռաց կմնա էջմիածնի տարեգրություններում»[2]: Եվ միանգամայն օրինաչափ է, որ ռուսաց կայսր Նիկոլայ Առաջինը, նկատի ունենալով Օշականի ճակատամարտի բարոյահոգեբանական և քաղաքական նշանակությունը, հակառակ իր ամենասիրելի ու ամենավստահելի գեներալ Պասկևիչի դժկամության, կարգադրեց Կրասովսկուն պարգևատրել Սուրբ Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանով, իսկ ճակատամարտը գրանցել տարեցույցում՝ կցելով հետևյալ բառերը. «այդքան համարձակ և հաջող ձեռնարկումն արժանի է դասվելու ռուսաստանյան խիզախ զինվորի հիշատակի արժանի սխրանքների շարքը»[3]: Իրենց հերթին, 20-րդ հետևակային դիվիզիայի սպաները, նկատի ունենալով Կրասովսկու խիզախությունը և ճակատամարտը հմտորեն ղեկավարելու փաստը, քաջ գեներալին հղած ողջույնի խոսքում ընդգծում էին, որ «երախտապարտ հայերը... արյունահեղ մարտի վայրում կառուցում են հուշարձան: Թող այն գալիք սերունդներին փոխանցի ռուսների սխրանքը և նրանց խիզախ առաջնորդի անունը»: Այս ողջույնն ավարտվում է հետևյալ բառերով. «Հայկական եկեղեցին որոշեց ամեն տարի տոնել այդ օրը որպես էջմիածնի մայրաթոռ վանքը ոչնչացումից ազատագրելու օր»[4]:

Իսկապես, 1834 թ. ի նշան հայ ժողովրդի երախտագիտության,

[1] Նույն տեղում, էջ 38:

[2] "Утверждение русского владычества на Кавказе" т. IV, ч. I, с. 236.

[3] Նույն տեղում, էջ 288:

[4] Նույն տեղում, էջ 289:

Կոմպանեյսկու նախագծով կառուցվեց մի համեստ հուշարձան, որ կանգուն է առ այսօր և խորհրդանշում է հայ և ռուս ժողովուրդների անցյալի ու ներկայի զինակցությունը: Ռուսաց հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ներկայացուցիչներն անխտիր համոզված էին, որ եթե ռուսներն առանց մարտի զիջեին վանքը, նրանց նկատմամբ հայերի համակրանքն անխուսափելիորեն կտրուկ կնվազեր, որը ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական առումով անթույլատրելի էր ու անցանկալի, քանզի տեղացի քրիստոնյա բնակչության ու գլխավորապես հայ ժողովրդի աջակցությունը Կովկասյան կորպուսին հույժ կարևոր գործոն էր թշնամուն ջախջախելու և Անդրկովկասում հիմնավորապես հաստատվելու համար: «Էջմիածինը,- գրում է Ախովը իր «Ռուսաստանը և հայերը» գրքույկում,- յուրատեսակ Մեքքա է հայերի համար: Ամեն տարի ամբողջ ընտանիքներով այնտեղ է հավաքվում ուխտագնացների հոծ բազմություն... Էջմիածինը և հայրապետությունը հսկայական ազդեցություն ունեցան ազգության և հայ ժողովրդի միասնության վրա: Այս վանքը կենտրոնատեղի է, ուր հավաքվում են հայերը, որոնք այստեղ ժամանելով Գանգեսի և Ինդոսի, Նեղոսի ու Եփրատի, Վոլգայի և Նևայի ափերից եղբայրաբար միմյանց ձեռք են մեկնում, ծանոթանում են և մտնում սերտ կապերի մեջ»[1]: Ուշագրավ է, որ գրեթե նույն տեսակետն է զարգացնում ռուս մեկ այլ հեղինակ՝ Պլատոն Զուբովը, 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին նվիրած աշխատությունում: Նա ավելացնում է, որ վանքում գտնվում են հայոց թանկարժեք ձեռագրերից կազմված մեծագույն գանձեր, որոնք կարող են նոր լույս սփռել երկրի խրթին պատմության վրա և լուսավորել այն ճշմարտության ջահով: Զուբովը իրավացիորեն նկատում է, որ այդ ձեռագրերը հնարավորություն են ընձեռում լիովին և միանգամայն սպառիչ մեկնաբանել նաև Արևելքի պատմությունը: Ռուս և հայ պատմագրության մեջ և հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների շրջանում արտացոլված են Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար և երկրամասի կառավարչապետ Իվան Պասկևիչ-Ներսես Աշտարակեցի բարդ, հակասական հարաբերություններն այն առումով, թե արդյոք նա Արևելյան Հայաստանից հեռացվեց ռուս գեներալի սեփական նախաձեռնության, բանսարկության, Պետերբուրգի վրա ճնշում գործադրելու հետևանքով, թե պարզապես կայսրության շահերից ելնելով քաղաքական նկատառումներով տեղափոխվեց Բեսարաբիա՝ ռուս-թուրքական պատերազմի պայմաններում հայերի ռուսամետությունը էլ ավելի ուժեղացնելու և խորացնելու համար 19-րդ հարյուրամյակի ռուսաց պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների տեսակետը սույն հիմնահարցում միանշանակ է. Ներսես Աշտարակեցին պարզապես հեռացվեց Արևելյան Հայաստանից ռուս կառավարչապետի դժկամության, հայոց հովվապետի հետ ունեցած սուր հակասությունների, նրա անկախ կեցվածքի, Պասկևիչին խստագույնս քննադատելու և չենթարկվելու, ընդդիմանալու, ռուսաց կայսրին բողոքով դիմելու սպառնալիքների պատճառով: Ինքնահավան ու ինքնավստահ, կայսրի մոտ մեծ վստահություն ու անգամ ազդեցություն ունեցող, լայն ճանաչման ու փառքի արժանացած գեներալ-կառավարչապետը բնականաբար չէր հանդուրժում որևէ առարկություն ո՛չ Ներսես Աշտարակեցու, ո՛չ էլ մեկ ուրիշի կողմից:

Արդարությունը պահանջում է ասել, որ Երևանի ազատագրումից հինգ օր հետո՝ 1827 թ. հոկտեմբերի 6-ին, նույն Պասկևիչի կարգադրությամբ կազմավորված ժամանակավոր վարչության պետ նշանակվեց Կրասովսկին, իսկ 2 անդամներից մեկը դարձավ Ներսես Աշտարակեցին: Այս փուլում Պասկևիչին դեռևս խիստ անհրաժեշտ էին հայերի շրջանում մեծ հեղինակություն և կազմակերպչական հմտություններ ունեցող գործիչներ, որպիսին էին իսկապես թե՛ Կրասովսկին և թե՛ Աշտարակեցին:

Կարապետ Եզյանի կարծիքով ևս Ներսես Աշտարակեցուն Բեսարաբիա ուղարկելու մեջ բացասական դեր խաղաց Պասկևիչը: Պետերբուրգում,- գրում է Եզյանը,- գիտեին նրա դիրքորոշման և բնավորության գծերի մասին, ուստի կայսրը չցանկանալով վիրավորել իր «հայր հրամանատարին»՝ Պասկևիչին, որին նա սիրում էր ու հարգում և ձգտելով վերջ տալ անցանկալի մթնոլորտին՝ Բեսարաբիայի հայ արքեպիսկոպոսի (Գրիգորի) մահվան լուրը ստանալուց հետո որոշեց այդ թափուր տեղը հատկացնել Ներսես Աշտարակեցուն: Ժամանելով Քիշինև՝ Աշտարակեցին տեղեկացավ, որ կոմս Պասկևիչը իրեն ներկայացրել է անհիմն մեղադրանքներ, որ հարկադրեցին նրան նամակով դիմել ստատս-քարտուղար Բլուդովին: Եզյանը համոզված էր, որ հատուկ Ներսես Աշտարակեցու համար ստեղծվեց Նախիջևանի-Բեսարաբիայի թեմը: Իսկապես, 1830 թ. ապրիլի 23-ին կայսերական գերագույն հրամանով ստեղծվեց այդ թեմը, որի կազմի մեջ ընդգրկվեցին Սանկտ-Պետերբուրգի, Մոսկվայի բոլոր եկեղեցիները: Կոմս Պասկևիչը խիստ դժգոհ էր այս ամենից,- գրում է Եզյանը,- քանզի գեներալի կարծիքով այն կուժեղացնի արքեպիսկոպոս Ներսեսի ազդեցությունը: Գեներալ Մուրավյով-Կարսկին իր նոթերում գրում է, որ Քիշինևում եղած ժամանակ այցելեց Ներսես Աշտարակեցուն, որին նա վաղուց էր ճանաչում և համարում էր փայլուն, գերազանց խելքի տեր անձնավորություն: Ինչ վերաբերում է Ներսես Աշտարակեցու կենսագիր Նովոսելովին, ապա նրա՝ շրջանառության մեջ դրված պաշտոնական վավերագրերից կարելի է եզրակացնել, որ Աշտարակեցին Քիշինև մեկնեց քաղաքական պատճառով, ռուսաց կայսրության շահերը պաշտ-

[1] **М. Ахов**, Россия и армяне, СПб, 1897, с. 28-29.

պանելու առաքելությամբ: Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը,- գրում է Նովոսելովը, նախախնամությունն արքեպիսկոպոսին ընձեռեց գործունեության դաշտ՝ լայնածավալ Ռուսաստանի մյուս ծայրագավառում, բայց նույնպես հանուն հայկազյան ազգի բարօրության: Բեսարաբիայում և ռազմական թատերաբեմի շրջակա մարզերում ապրում էին շատ հայեր, ու կայսրը ցանկացավ և գերագույն հրամանով Բեսարաբիա ուղարկեց ամենաազդեցիկ, ամենա ճանաչված ու հարգված արքեպիսկոպոսին՝ Ներսես Աշտարակեցուն: Նովոսելովը հենվում է մեկ այլ պաշտոնական վավերագրի՝ կայսերական ոստիկանության պարագլուխ գեներալ-համիարզ Ալեքսանդր Քրիստոփորի Բենկենդորֆի՝ Ներսես Աշտարակեցուն հղած փաստաթղթի վրա, որտեղ նույնպես հիմնավորվում է նրա Բեսարաբիա մեկնելու անհրաժեշտությունը՝ դրա մեջ տեսնելով կայսրի հատուկ վստահության և բարձր գնահատման դրսևորում: Հատկապես կարևոր է Պասկևիչի նամակը ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմին, որտեղ հիշեցնելով կայսրի կամքը՝ նա միաժամանակ ընդգծում է, թե ինքը, հարգելով արքեպիսկոպոս Ներսեսի նվիրվածությունը ռուսաց գահին, նրա ծառայությունները հայոց ազգին, իր կողմից նույնպես օգտակար է համարում նրա մեկնումը Բեսարաբիա և խնդրում է ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկել Ներսեսին ընդունելու այդ որոշումը: Ավելին, Ներսես Աշտարակեցուն Սուրբ Ալեքսանդր Նևսկու շքանշանով պարգևատրելու վերաբերյալ Նիկոլայ Առաջինի շնորհագրում նշված է, Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ-համիարզ Պասկևիչը բազմիցս զեկուցել է կայսրին Ռուսաստանի նկատմամբ նրա ջերմեռանդության մասին: Նովոսելովի կարծիքով Ներսեսը բնավ չտատանվեց և անմիջապես թողեց իր հայրենիքը 1828 թ: Այդ պահից շուրջ 15 տարի մնաց կայսրության հարավում, թեև Եփրեմ կաթողիկոսը հաջորդ տարի ցանկացավ նրան վերադարձնել Վրաստան, սակայն 1829 թ. մարտի 12-ի կաթողիկոսի անունով գերագույն հրովարտակում կայսրը արքեպիսկոպոսի ներկայությունը Բեսարաբիայում և Ռուսաստանում գտնում էր անհրաժեշտ: Ներսես Աշտարակեցուն քաղաքական նկատառումներով Բեսարաբիա ուղարկելու տեսակետի ամենազորեղ փաստարկն այն է, որ ռուսաց կայսրը նրան պաշտոնապես հաստատեց և ճանաչեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, որով ի մի բերեց եկեղեցական ժողովի ընտրությունները, արդյունքները և կայացրած որոշումը: Թեև ոչ ոք չէր կարող մրցակցել անառարկելի հեղինակությունն Ներսես Աշտարակեցու հետ, չէր կասկածում, որ հենց նա է ամենաարժանի թեկնածուն, առավել ևս հավակնել Հայրապետական աթոռին, այնուամենայնիվ, որոշվեց չխախտել ու հետևել 1836 թ. ընդունած եկեղեցական Կանոնադրությանը /«Պոլոժենիեն»/ և ընտրությունն անցկացնել այլընտրանքային սկզբունքով՝ մեկից ավելի թեկնածուներ առաջադրելու պարտադիր պայմանով: Ներսես Աշտարակեցու

ձևական մրցակիցներ դարձան և իրենց թեկնածությունները առաջադրեցին Երուսաղեմի պատրիարք Զաքարիա Կոփեցին, Զմյուռնիայի արքեպիսկոպոս Պողոսը, Կ.Պոլսի նախկին պատրիարք Կարապետը: Ինչպես և սպասվում էր 26 հոգևոր ազդեցիկ հայրերը միաձայն քվեարկեցին Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու օգտին, մյուսները՝ համապատասխանաբար ստացան 17, 11, 3 ձայներ: Կանոնադրության համաձայն ռուսաց կայսրին պետք է ներկայացվեր 2 անուն, իսկապես Ներսես Աշտարակեցի անվան հետ. ներկայացվեց Զաքարիա Կոփեցի Երուսաղեմի պատրիարքի անունը: Ինքնին հասկանալի է, որ Նիկոլայ Առաջինը հաստատեց ձայների առավելագույնը հավաքած Ներսես Աշտարակեցու թեկնածությունը: Ավելին, կայսրը ցանկացավ ոչ միայն անձամբ տեսակցել Ներսեսի հետ, այլև ուղղակի իրեն հանձնել հաստատված հրովարտակը: Այսպես, 1843 թ. ապրիլի 17-ին՝ մեծ ուշացումից, երկար սպասումից հետո վերջապես հայոց հովվապետ դարձավ ու շուրջ 14 տարի կաթողիկոսական բարձր աթոռին բազմեց Ներսես Աշտարակեցին: Հիրավի մեծություն էր Աշտարակեցին: Եվ դա էր պատճառը, որ ազգը, էջմիածնի միաբանությունը վաղուց էր ցանկանում նրան տեսնել կաթողիկոսական գահին, որովհետև նրա հայրենանվեր, փառավոր անցյալը, բեղմնավոր ներկան, վեհ հոգին, անշուշտ, ունեցավ իր ազդեցությունը, տվեց մեծ արդյունք, գրավեց հազարավոր մտքեր և շարժեց նույնչափ սրտեր: Իմաստուն, ուղղամիտ, խոհեմ, հեռամետ հոգևոր-աշխարհիկ այս բացառիկ այրը պետականության բացակայության պայմաններում հմտորեն զուգակցելով ու ներդաշնակելով հայ ժողովրդի ազգային շահերը ռուսաց հզոր կայսրության կենսագործած ներքաղաքական ու արտաքին քաղաքականության հետ կարողացավ բարձրության վրա պահել քաղաքական այս ռազմավարությունը և մարտավարությունը ու արժանանալ կաթողիկոսական աստիճանին: Ռուսաց կայսրի բարեհաճ ցանկությունը նոր ընտրված կաթողիկոսին Պետերբուրգում տեսնելու մասին լուրը նրան հասավ ընտրությունից մեկ ամիս անց մայիսի կեսերին և ներքին գործերի նախարարի գրությունը ստանալուց տասն օր անց հունիսի սկզբին թողեց Քիշինևը և բռնեց հյուսիսային մայրաքաղաքի ճանապարհը: Երկու մայրաքաղաքներում, ապա կայսրության հայաբնակ քաղաքներում կաթողիկոսի ազգանվեր առաքելությունը մանրամասնորեն նկարագրված է Օրմանյանի ու հանգամանորեն ներկայացված է Նովոսելովի աշխատություններում [1]:

Կաթողիկոսը հունիսի վերջերին հասավ Պետերբուրգ ու հանգրվա-

[1] Տե՛ս **Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան**, Ազգապատում, Պէյրութ 1961: Գ հատոր Ա գիրք, էջ 3766-3863: **С. Новоселов:** Нерсес V Верховный Патриарх и католикос всех армян; Санктпетербург; 1858:

նեց Լազարյանների հյուրընկալ ապարանքում: Նիկոլայ Առաջինի հետ կաթողիկոսի հանդիպումը տեղի չունեցավ: Նախ՝ կաթողիկոսի հիվանդության պատճառով, երկրորդ՝ կայսրի արտասահման մեկնելու կապակցությամբ: Նա միաժամանակ հանձնարարեց ներքին գործերի նախարար Պերովսկուն խնամել ու առողջացնել կաթողիկոսին: Պալատական երեք բժիշկներ օրը երեք անգամ այցելում էին կաթողիկոսին՝ Խաչատուր Լազարյանի հոգածությամբ: Այնուամենայնիվ կաթողիկոսը կարողացավ այցելել ռուսաց նախարարներին, իսկ իրեն Պետերբուրգում գտնվելու ժամանակ՝ Լեհաստանի կառավարչապետ Իվան Պասկևիչը, որը Կովկասում գտնվելիս շատ անախորժություններ էր պատճառել Ներսես Աշտարակեցուն: Կառավարչապետը կարծես ցանկանալով քավել իր մեղքը՝ հորդորեց կաթողիկոսին մոռանալ անցյալը և բացել բարեկամական նոր էջեր: Ներսես Աշտարակեցին ցուցաբերելով խոհեմություն և համոզված լինելով, որ անիմաստ է անդրադառնալ անցյալին ու վերստին վեր հանել Պասկևիչի ստվերոտ կողմերը՝ նրան ընդունեց որքան հնարավոր է հարգալից ու սիրալիր: Մանավանդ Պասկևիչը ցավ էր զգացել, որ կառավարությունը, իրեն դասելով Ներսես Աշտարակեցու թշնամիների շարքը, չցանկացավ լսել նրա կարծիքը, հավանաբար նա մեծ ուշացումով փոխել էր իր վերաբերմունքը և նպաստավոր միտք ուներ հայտնելու ընտրվող կաթողիկոսի մասին: Ներսես Աշտարակեցին Պետերբուրգից մեկնեց 1844 թ. մայիսի կեսերին: Մոսկվայում մնաց երկու ամիս, այցելեց իր հին բարեկամ Կովկասի նախկին կառավարչապետ Ալեքսեյ Երմոլովին, սերտ հարաբերություններ հաստատեց ռուս միտրոպոլիտ Ֆիլարետի՝ անվանի գիտնականի ու հոգևորականի հետ: Մոսկվան թողնելիս Ֆիլարետը նրան ուղեկցեց մինչև 45 մղոն, որից հետո նրանք հրաժեշտ տվեցին՝ միտրոպոլիտը վերադարձավ Մոսկվա, իսկ կաթողիկոսն ուղևորվեց դեպի Բեսարաբիա՝ Քիշինև, ուր մնաց ութ ամիս: Էջմիածին վերադառնալուց հետո 1846 թ. հունիսի 9-ին, այսինքն կաթողիկոս ընտրվելուց երեք տարի երկու ամիս անց մայր աթոռում հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ օծման արարողությունը:

Օրմանյանի կարծիքով Խաչատուր Լազարյանի ու Ներսես Աշտարակեցու հարաբերությունների վատացման հետևանքով կաթողիկոսը փաստորեն զրկվեց Ալեքսանդր Երկրորդի թագադրման պաշտոնական հանդիսավոր արարողությանը մասնակցելուց: «Հնօրյա անխզելի բարեկամը (Խաչատուր Լազարյանը-Մ.Մ.) անհաշտ թշնամի եղավ Ներսեսին... Խաչատուրը մտերիմների ձեռքով աշխատեց զրկել Ներսեսին այդ պատվից», այսինքն, չմասնակցել այդ արարողությանը, թեև նա պաշտոնապես պետք է հրավիրվեր: Եվ հրավերը գրվեց այնպես, որ կաթողիկոսի խոր ծերությունը պատրվակ դարձնելով առաջարկվեց ներկայացուցիչ ուղարկել, որն անհավանական թվաց և կասկածներ

առաջացրեց Աշտարակեցու մոտ: Այն փարատելու նպատակով ու հատկապես պարզելու, թե միգուցե նոր կայսրի կամքն է ու ցանկությունը, վիրավորված կաթողիկոսը անմիջապես դիմեց իր երկու բարեկամներին՝ Օրլովին և Վորոնցովին: Երկուսն էլ պատասխանեցին, թե կասկածի տեղ չկա, թե կայսրը ափսոսել է, որ այդպես է ստացվել, թե նոր կառավարչապետ իշխան Բարյատինսկին կայսրի անունից իրեն է բերելու հաճոյական հանձնարարություն: Նախ՝ կայսերական ողջույնը և երկրորդ՝ Սուրբ Անդրեի մեծ շքանշանը:

Բարյատինսկին հազիվ Թիֆլիս հասած 1857 թ. փետրվարին այցելում է Ներսեսին, իսկ մյուս օրը՝ կաթողիկոսը փոխադարձ գնում է նրան այցելության: Փետրվարի 12-ին Բարյատինսկին դարձյալ Ներսեսին իր մոտ է հրավիրում տեսակցության: Բայց նույն գիշերը կաթողիկոսը վախճանվում է՝ փետրվարի 13-ին 86 տարեկան հասակում, առավոտյան նրան գտնում են մահացած, գրիչը ձեռքին, որը դեռ թաց էր, իսկ սեղանի վրա եղած մի քանի թղթի կեսը գրված էր՝ այն ուղղված էր ներքին գործերի պաշտոնյային կաթողիկոսական իրավունքները պաշտպանելու համար: Օրմանյանը լիովին հերքում է, անհնարին համարում կաթողիկոսի մահը դիտել իբրև «դավաճան ոճիրի զոհ» ու գտնում, որ նա կյանքից հեռացավ իր բնականոն մահով: Փետրվարի 13-ին Թիֆլիսի հայկական բոլոր եկեղեցիների զանգերը միահամուռ մահազանգ հնչեցրին, թախիծ տիրեց քաղաքում, ուրախության օրերը Տեառնընդառաջի կապակցությամբ վերածվեց սգի: Տարբեր ազգության մարդիկ ողբացին Ներսեսի կորուստը՝ հայեր, օրթոդոքս հրեաներ, մահմեդականներ, տղամարդիկ, կանայք, ծերեր առանց տարբերության գալիս էին եկեղեցի իրենց վերջին հրաժեշտը տալու հայոց կաթողիկոսին[1]: Ներսես Աշտարակեցու դին սգո մեծ հանդիսավորությամբ Թիֆլիսից ճանապարհեցին Էջմիածին, ուղեկցում էին փոխարքան, պետական, զինվորական, եկեղեցական բարձրաստիճան այրեր, անթիվ անհամար բազմություն: Էջմիածնի սինոդականների հսկողությամբ թափորը ճամփա ընկավ և մայր աթոռ հասավ փետրվարի 26-ին, իսկ մյուս օրը՝ փետրվարի 27-ին կատարվեց հանդիսավոր հուղարկավորությունը Դանիել կաթողիկոսի շիրիմի մոտ: Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես V Աշտարակեցու քաղաքական գործունեության հարուստ ժառանգության համակողմանի ու անաչառ քննախոսումը հատկապես հայ-ռուսական զինակցության վերաբերյալ նրա խորիմաստ մարտավարության ու ռազմավարության յուրացումը հրատապ է և արդիական՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը և ինքնիշխանությունը պահպանե-

[1] Տե՛ս **Մաղաքիա Արքեպիսկոպոս. Օրմանեան**, Ազգապատում, Պէյրութ 1961: Գ հատոր, Ա գիրք, էջ 3952-3954: **С. Новоселов:** Нерсес V Верховный Патриарх и католикос всех армян; Санктпетербург; 1858:

լու, տարածաշրջանում կայունությունը և խաղաղությունը ապահովելու տեսանկյունից: Հետևաբար որքան ժամանակը սրընթաց շարժվում է առաջ, իսկ պատմության թափանիվը ընթանում է ռազմաքաղաքական բարդ հորձանուտներով և դիվանագիտական անկանխատեսելի որոգայթներով ու լաբիրինթոսներով, այնչափ հրատապ կլինի Ներսես Աշտարակեցի պատմական անհատի անմար ու անմահ անունը:

М. А. Мурадян, Верховный Католикос Всех Армян Нерсес V Шахазизян Аштаракеци в оценке русской, исторической и общественно-политической мысли XIX века.- В статье рассматривается оценка русской исторической и общественно-политической мысли XIX века о деятельности 135-го Верховного Католикоса Всех Армян Нерсеса V Аштаракеци, подчеркивается его русская, политическая ориентация на благо армянского народа и на пользу Российского Государства.

M. A. Muradyan, Nerses V Ashtaraketsi Supreme Patriarch and Catholicos of all Armenians in the Estimation of Russian Historical and Socio-Political Thoughts of the 19th Century.- The article deals with the estimation of Russian, historic and socio-political ideas of the 19th century referring to the 135th Supreme Patriarch and Catholicos of All Armenians Nerses V Ashtaraketsi, it is pointed out his Russian, political orientation for the benefit of the Armenian nation and the Russian Empire.